# Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունենալու համար մի շարք քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից տարկետումները դադարեցնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություն կատարելու մասին

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**------ --------------------------- 2025 թ. № --------- -Ա**

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ և 12-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Դադարեցնել կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունենալու համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տրված հետևյալ քաղաքացիների տարկետումները՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» N 1111-Ա որոշմամբ տրված՝ Կարեն Արմենի Վարտանյանսի (ծնվ.՝

08.04.2004 թ., հաշվառման վայրը՝ ք. Երևան, Նորքի 6 փող., 1-ին նրբ. 26/5 տուն, Վիսկոնսին-Մեդիսոնի համալսարան),

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 18-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ձմեռային զորակոչից տարկետում տալու մասին» N 78-Ա որոշմամբ տրված՝ Վահե Անդրանիկի Արզումանյանին (ծնվ.՝ 18.07.2005 թ., հաշվառման հասցե՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տնակ 236/059),

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին և կառավարության մի շարք որոշումներում փոփոխություն կատարելու մասին» N 1055-Ա որոշմամբ տրված՝ Արթուր Ռաֆիկի Դավթյանին (ծնվ.՝ 27.08.2002 թ., հաշվառման վայրը՝ ք. Երևան, Դավիթաշեն Զոր 1 թաղ., 44 տուն, Մանչեսթերի համալսարան), Էդուարդ Ալեքսանդրի Գրիգորյանին (ծնվ.՝ 14.10.2006 թ., հաշվառման վայրը՝ ք. Երևան, Կարապետ Ուլնեցու փող., 70/1, բն. 58, Մանչեսթերի համալսարան), Սարգիս Արսենի Կարապետյան (ծնվ.՝ 11.02.2006 թ., հաշվառման վայրը՝ ք. Երևան, Անդրանիկի փող., 77 շ, բն. 27, Շանհայ Ծիաթոն համալսարան) և Նարեկ Նվերի Սարգսյանին (ծնվ.՝ 30.05.2006 թ., հաշվառման վայրը՝ ք. Երևան, Առինջ 23 փ., տուն 3, Կալիֆոռնիայի համալսարան, Լոս Անջելես):

2. Ուժը կորցրած ճանաչել.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» N 1111-Ա որոշմամբ հաստատված՝ N 1 հավելվածի 3-րդ կետի 8-րդ ենթակետը,

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 18-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ձմեռային զորակոչից տարկետում տալու մասին» N 78-Ա որոշմամբ հաստատված՝ N 1 հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետը,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին և կառավարության մի շարք որոշումներում փոփոխություն կատարելու մասին» N 1055-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 1-ին կետը, 3-րդ կետի 9-րդ ենթակետը, 17-րդ ենթակետը և 69-րդ ենթակետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ